

ԲՈՒՀԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2022

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

*Հարգելի՛ դիմորդ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 Հասարակական աշխարհահամակարգ է.

- 1) անտառը
- 2) քաղաքը
- 3) անապատը
- 4) ճահիճը

2 Հյուսիսային կիսագնդի լեռների ո՞ր լանջերն են առավել շատ անտառապատ.

- 1) հյուսիսարևելյան
- 2) հարավային
- 3) հարավարևելյան
- 4) հյուսիսային

3 Հորիզոնի ո՞ր կողմի ազիմուտն է 270°:

- 1) արևելյան
- 2) հյուսիսային
- 3) արևմտյան
- 4) հարավային

4 Քարտեզում 2 կետերի հեռավորությունը 7 սմ է, իսկ իրականում՝ 49 կմ: Այդ քարտեզի մասշտաբը կլինի.

- 1) 1 : 700 000
- 2) 1 : 7000 000
- 3) 1 : 70 000 000
- 4) 1 : 70 000

5 Այն ասուպները, որոնք չեն հասցնում մթնոլորտում այրվել և ընկնում են Երկրի վրա, կոչվում են.

- 1) աստղակերպեր
- 2) գիսավորներ
- 3) արբանյակներ
- 4) երկնաքարեր

6 Յուրաքանչյուր ժամային գոտու ժամանակը հարևան գոտու ժամանակից տարբերվում է.

- 1) 30 րոպեով
- 2) 45 րոպեով
- 3) 60 րոպեով
- 4) 15 րոպեով

7

Նկար 1-ում պատկերված է.

- 1) գեյզեր
- 2) ջրվեժ
- 3) հրաբուխ
- 4) ջրհոր

Նկար 1



8

Փոխակերպային ապար է.

- 1) կրաքարը
- 2) բազալտը
- 3) քարածուխը
- 4) մարմարը

9


Մթնոլորտային ցածր ճնշման մարզը կոչվում է.

- 1) տորնադո
- 2) թայֆուն
- 3) անտիցիկլոն
- 4) ցիկլոն

10

Նկար 2-ում n° թվով է նշված օդի ջերմաստիճանի տարեկան ընթացքի կորը բարեխառն լայնություններում:

- 1) 2
- 2) 3
- 3) 4
- 4) 1



Նկար 2

11 Նշվածներից ո՞ր ծովը Անտարկտիդայի ափերը չի ողողում:

- 1) Բելինսհաուզենի
- 2) Ռոսսի
- 3) Ամունդսենի
- 4) Բարենցի

12 Գետի լայնակի կտրվածքի մակերեսը  $4 \text{ մ}^2$  է, արագությունը՝  $3 \text{ մ/վ}$ : Գետի ծախսը կլինի.

- 1)  $70 \text{ մ}^3/\text{վ}$
- 2)  $24 \text{ մ}^3/\text{վ}$
- 3)  $36 \text{ մ}^3/\text{վ}$
- 4)  $12 \text{ մ}^3/\text{վ}$

13 Գոլորշացման քանակը արտահայտում են.


- 1) տոկոսով
- 2) գրամով
- 3) բալով
- 4) միլիմետրով

14 Մթնոլորտային տեղումներից ո՞րը Երկրի մակերևույթ չի թափվում ամպերից.

- 1) ձյուն
- 2) կարկուտ
- 3) ցող
- 4) անձրև

15 Նկար 3-ում ո՞ր թվով է պատկերված սավանաների զոնան:

- 1) Բ
- 2) Գ
- 3) Դ
- 4) Ա



Նկար 3

16

Ի՞նչն է առավելապես շատ բնորոշ տունդրայի բնական զոնային:

- 1) պողոզլային հողերի գերակշռությունը
- 2) ծառային բուսականության տարածումը
- 3) խոտակեր խոշոր կենդանիների տարածումը
- 4) հողի բազմամյա սառածությունը

17


Քարտեզ 1-ում Դ տառով n՞ր նեղուցն է նշված.

- 1) Թորենի
- 2) Բասսի
- 3) Կուկի
- 4) Դրեյկի

18

Քարտեզ 1-ում Ը տառով n՞ր նավահանգիստն է նշված.

- 1) Կանբերա
- 2) Սիդնեյ
- 3) Դարվին
- 4) Մելբուռն



19

Բնութագրումով որոշել թերակղզին.

*Ասիայի մեծ թերակղզիներից է և ունի տիպիկ մուսսունային կլիմա: Տարածքի գերակշիռ մասը զբաղեցնում է աշխարհի խոշորագույն երկրներից մեկը: Ո՞ր թերակղզին է.*

- 1) Հինդուստան
- 2) Հնդկաչին
- 3) Սկանդինավյան
- 4) Արաբական

20

Ո՞ր լեռնաշղթայից է սկիզբ առնում Հոենոս գետը:

- 1) Անդերից
- 2) Պիրենեյներից
- 3) Ալպերից
- 4) Բալկաններից

21

Նշված ծովային հոսանքներից ո՞րն է սառը.

- 1) Գոլֆստրիմը
- 2) Ալյասկայինը
- 3) Լաբրադորյանը
- 4) Անտիլյանը

22

Հյուսիսային Ամերիկայում աճում են.

- 1) ակացիա և ժենշեն
- 2) բիզոնի խոտ և սեքվոյա
- 3) սեյբա և բաոբաբ
- 4) հնեա և էվկալիպտ

23

Հարավային Ամերիկայում է.

- 1) Առափնյա դաշտավայրը
- 2) Դեմավենդ լեռնագագաթը
- 3) Գվիանական սարահարթը
- 4) Կորդիլիերյան լեռնաշղթան

24

Ո՞ր լիճն է Հարավային Ամերիկայում:

- 1) Տիտիկակա
- 2) Լադոգա
- 3) Միչիգան
- 4) Արալյան

25

Անտարկտիդան հայտնաբերել են.

- 1) անգլիացիները
- 2) ամերիկացիները
- 3) ռուսները
- 4) շվեդները

26

Ո՞ր նեղուցով է Արաբական թերակղզին բաժանվում Աֆրիկայից.

- 1) Մալակկայի
- 2) Լա Մանշի
- 3) Բար-Էլ-Մանդեբի
- 4) Լապերուզի

27

Տարածքի մեծությամբ աշխարհի գերխոշոր պետություններ են.

- 1) Կանադան և Ավստրալիան
- 2) Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան
- 3) Նիկարագուան և Մեքսիկան
- 4) Իտալիան և Շվեյցարիան

28

Նշվածներից ո՞ր երկիրն ունի ավելի քան 200 մլն բնակիչ.

- 1) Ճապոնիան
- 2) Ղազախստանը
- 3) Ռուսաստանը
- 4) Ինդոնեզիան

29

Նշվածներից ո՞ր երկիրը ելք ունի դեպի Պարսից ծոց.

- 1) Սիրիան
- 2) Լիբանանը
- 3) Եգիպտոսը
- 4) Իրանը

30

Հետամնաց ագրարային երկրներ են.

- 1) Հնդկաստանը և Չինաստանը
- 2) Արգենտինան և Մեքսիկան
- 3) Քուվեյթը և Վենեսուելան
- 4) Չադը և Եթովպիան

31

Երկրի տարածքը կազմում է 20000 կմ<sup>2</sup>, բնակչության թիվը՝ 7 մլն մարդ: Բնակչության միջին խտությունը կլինի.

- 1) 130 մարդ/ կմ<sup>2</sup>
- 2) 270 մարդ/ կմ<sup>2</sup>
- 3) 420 մարդ/ կմ<sup>2</sup>
- 4) 350 մարդ/ կմ<sup>2</sup>

32 Միգրացիայի պատճառ չէ.

- 1) տնտեսականը
- 2) քաղաքականը
- 3) ազգայինը
- 4) կազմակերպվածը

33 Քաղաքաբնակների բացարձակ թվով աշխարհում առաջին երկիրն է.

- 1) Հնդկաստանը
- 2) Պակիստանը
- 3) Չինաստանը
- 4) Ռուսաստանը

34 Չարգացման արդյունաբերական փուլում գտնվող երկրներ են.

- 1) Ֆրանսիան և Իտալիան
- 2) Մոզամբիկը և Բանգլադեշը
- 3) Բրազիլիան և Արգենտինան
- 4) Գերմանիան և Բելգիան

35 Գազի հանույթով առաջատար երկրներ են.

- 1) Նիդեռլանդները և Ռուսաստանը
- 2) Չինաստանը և Ճապոնիան
- 3) Ավստրալիան և Հնդկաստանը
- 4) Գերմանիան ու Ֆրանսիան

36 Շաքարեղեգի մշակությամբ աշխարհում առաջատար երկրներից է.

- 1) Բրազիլիան
- 2) Կանադան
- 3) Ճապոնիան
- 4) Ռուսաստանը

37 Զույգերով տրված պետություններից որո՞նք ունեն ցամաքային սահման ՌԴ հետ:

- 1) Էստոնիա և Վրաստան
- 2) Ուկրաինա և Մոլդովա
- 3) Թուրքիա և Իրան
- 4) Շվեդիա և Հայաստան



38

Ընտրել «պետություն-մայրաքաղաք» համապատասխանությունների ճիշտ շարքը:

- |                 |              |
|-----------------|--------------|
| 1. Ավստրիա      | ա. Ամստերդամ |
| 2. Բելգիա       | բ. Փարիզ     |
| 3. Նիդեռլանդներ | գ. Բրյուսել  |
| 4. Ֆրանսիա      | դ. Վիենա     |

- 1) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ
- 2) 1-ա, 2-դ, 3-գ, 4-բ
- 3) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
- 4) 1-գ, 2-բ, 3-ա, 4-դ

39

Դեպի Կասպից ծով ելք ունի.

- 1) Աֆղանստանը
- 2) Սաուդյան Արաբիան
- 3) Արաբական Միացյալ Էմիրությունները
- 4) Իրանը

40

Ո՞ր պետությունն է գտնվում Հարավային Ասիայում:

- 1) Չինաստան
- 2) Մոնղոլիա
- 3) Ճապոնիա
- 4) Պակիստան

41

Չույզերով տրված պետություններից որո՞նք են միապետություն:

- 1) Սվազիլենդը և Լեսոտոն
- 2) Ալժիր և Նիգերիա
- 3) Մարոկկո և Եթովպիա
- 4) Եգիպտոսը և Թունիսը

42

Իտալիային պատկանող կղզի է.

- 1) Սիցիլիան
- 2) Կալիմանտանը
- 3) Կորսիկան
- 4) Թասմանիան

43

«Կեղծ ուրբանիզացիան» բնորոշ է.

- 1) Արևմտյան Եվրոպային
- 2) Հարավային Եվրոպային
- 3) Հյուսիսային Ամերիկային
- 4) Լատինական Ամերիկային



քարտեզ 2

44

Քարտեզ 2-ում Գոգի լեռնազագաթը ո՞ր տառով է նշված.

- 1) Բ
- 2) Գ
- 3) Դ
- 4) Ա

45

Քարտեզ 2-ում Քաջարանի հանքը ո՞ր տառով է նշված.

- 1) Զ
- 2) Է
- 3) Ը
- 4) Ե

46

ՀՀ-ի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Արևմուտքում սահմանակից է Վրաստանին:
- 2) Արևելքում սահմանակից է Ադրբեջանին:
- 3) Հյուսիսում սահմանակից է Թուրքիային
- 4) Ամենաերկար սահմանն ունի Իրանի հետ:

47

**ՀՀ կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Հստակ արտահայտված է հյուսիսից հարավ փոփոխվող լայնակի կլիմայական գոտիականությունը:
- 2) Կլիմայաստեղծ գործոններից են մուսսոնները:
- 3) Միջլեռնային գոգավորությունների ցածրադիր մասերում ձմռանը դիտվում է ջերմաստիճանային շրջադասություն:
- 4) Ամենաշատ տեղումները թափվում են Արփայի գոգավորությունում:

48

**Մինչխորհրդային Հայաստանում տնտեսության ո՞ր ճյուղերին էր բաժին ընկնում արդյունաբերության համախառն արտադրանքի գերակշիռ մասը.**

- 1) սև մետաղաձուլությանը և կաշվի-կոշիկի արտադրությանը
- 2) գորգագործությանը և կաուչուկի արտադրությանը
- 3) պղնձաձուլությանը և գինու-կոնյակի արտադրությանը
- 4) շվեյցարական պանրագործությանը և մրգի պահածոների արտադրությանը

49

**Մեծամորի աէլի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Աշխատում է տեղական միջուկային վառելիքով:
- 2) ՀՀ ամենահզոր էլեկտրակայանն է:
- 3) Արարատի մարզում է:
- 4) Միակ ատոմակայանն է հարավկովկասյան տարածաշրջանում:

50

**Չույզերով տրվածներից որո՞նք են ոսկու հանքավայրեր.**

- 1) Քաջարանը և Ագարակը
- 2) Շվանիձորը և Թեժ լեռը
- 3) Մեղրաձորը և Սոթքը
- 4) Կապանը և Ալավերդին

51

**Թթվային անձրևների առաջացման պատճառներից է.**

- 1) խոշոր քաղաքներում զբոսաշրջության զարգացումը
- 2) հանքային պարարտանյութերի օգտագործման չարաշահումը
- 3) գործարաններից ծծմբային միացությունների արտանետումները
- 4) մթնոլորտում ածխաթթու գազի առկայությունը

52

**«Բնական ռեսուրս — վերականգնման հնարավորություն» գույզերից ընտրել ճիշտը:**

- 1) կլիմայական ռեսուրս — սպառվող վերականգնվող
- 2) երկրաջերմային ռեսուրս — անսպառ
- 3) հանքային ռեսուրս — սպառվող վերականգնվող
- 4) կենսաբանական ռեսուրս — անսպառ

53

Տրվածներից ո՞րը հողաբարելավման միջոցառում չէ:

- 1) ջրամբարների կառուցումը
- 2) գերխոնավ հողերի չորացումը
- 3) հակաէրոզիոն միջոցառումների կազմակերպումը
- 4) քարամաքրումը

54

Տրվածներից ո՞րն է ՄԱԿ-ի հատուկ մասնագիտացված բնապահպանական կազմակերպություն:

- 1) ՅՈՒՆԻՍԵՖ
- 2) ՅՈՒՆԵՊ
- 3) ՅՈՒՆԻԿՏԱԴ
- 4) ՅՈՒՆԵՍԿՕ

55

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Թույլ զարգացած երկրներում զանգվածային անգրագիտությունը հետամնացության ցուցանիշներից է:
- 2) Թույլ զարգացած երկրների տնտեսության մեջ գերակշռողը գյուղատնտեսության բաժինն է:
- 3) Թույլ զարգացած երկրներում բնապահպանական հիմնախնդիրներ չկան:
- 4) Թույլ զարգացած երկրների բնատեսուրսային ներուժը վիթխարի է, օգտագործման տեսանկյունից արդյունավետությունը՝ ցածր:

56

Տրված են աշխարհի նշանավոր լճեր: Գրել մնացորդային ծագում ունեցող լճերը.

- |           |            |
|-----------|------------|
| 1) Էյր    | 5) Լադոգա  |
| 2) Սևանա  | 6) Արալյան |
| 3) Չադ    | 7) Նյասա   |
| 4) Կասպից | 8) Վերին   |

57

Գրել այն գետերի համարները, որոնք թափվում են Հնդկական օվկիանոս.

- |             |            |
|-------------|------------|
| 1) Օրանժ    | 5) Ինդոս   |
| 2) Նիգեր    | 6) Մեկոնգ  |
| 3) Սիրդարյա | 7) Զամբեզի |
| 4) Մուրեյ   | 8) Տիգրիս  |

58

Գրել այն երկրների համարները, որոնց բնորոշ է «ժողովրդագրական ճգնաժամը».

- |           |             |
|-----------|-------------|
| 1) Լատվիա | 5) ԱՄՆ      |
| 2) Սիրիա  | 6) Ուկրաինա |
| 3) Եմեն   | 7) Թուրքիա  |
| 4) Կանադա | 8) Իրան     |

59

Գրել այն երկրների համարները, որտեղ գերակշռում է մահմեդականությունը.

- |              |                    |
|--------------|--------------------|
| 1) Ալբանիա   | 5) Հարավային Կորեա |
| 2) Թուրքիա   | 6) Չինաստան        |
| 3) Տաջիկստան | 7) Բանգլադեշ       |
| 4) Հնդկաստան | 8) Պակիստան        |

60

Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են մեքենաշինությամբ.

- |              |              |
|--------------|--------------|
| 1) Թուրքիա   | 5) Գերմանիա  |
| 2) Հնդկաստան | 6) Ճապոնիա   |
| 3) Ղազախստան | 7) Իրան      |
| 4) Ավստրալիա | 8) Աֆղանստան |

61

Գրել այն բնակավայրերի համարները, որոնք երկաթուղային կայարաններ չեն.

- |             |               |
|-------------|---------------|
| 1) Աբովյան  | 5) Սոթք       |
| 2) Գորիս    | 6) Վարդենիս   |
| 3) Մարտունի | 7) Վաղարշապատ |
| 4) Մարալիկ  | 8) Արարատ     |

62

Տրված պետությունների համարները դասավորել դրանց տարածքի մեծության նվազման կարգով:

- |              |           |        |             |
|--------------|-----------|--------|-------------|
| 1) Ռուսաստան | 2) Կանադա | 3) ԱՄՆ | 4) Չինաստան |
|--------------|-----------|--------|-------------|

63

ՀՀ տրված քաղաքների համարները դասավորել Երևանից ունեցած հեռավորության աճման կարգով.

- |         |            |         |
|---------|------------|---------|
| 1) Բերդ | 2) Աշտարակ | 3) Սևան |
|---------|------------|---------|

(64-65). Քաղաքի բնակչության թիվը 80 000 է, բնակչության բացարձակ բնական աճը՝ 1500 մարդ: Եկաճների թիվը 2200 մարդ է, մեկնաճների թիվը՝ 1800 մարդ:

64 Որոշել միգրացիայի մնացորդը:

65 Որոշել քաղաքի բնակչության թիվը 1 տարի հետո:

66 Երկրում ցորենի ցանքատարածությունների մակերեսը 4 մլն հա է, համախառն բերքը՝ 16 մլն տ: Որքա՞ն է ցորենի միջին բերքատվությունը:

67 24000 կՎտ/ժ էլեկտրաէներգիա արտադրելու համար քանի՞ տոննա քարածուխ է հարկավոր(քարածխի ջերմային գործակիցը 1 է):

68

Երկրի բնակչության թիվը 12 մլն մարդ է, տարածքի մակերեսը՝ 80 000 կմ<sup>2</sup>: Որքա՞ն է երկրի բնակչության միջին խտությունը:

69

Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Երզնկայի դաշտը Արևմտյան Եփրատի վերին հոսանքի ավազանում է:
- 2) Կարնո դաշտը Արևմտյան Եփրատի հովտում է:
- 3) Արևելյան Եփրատի միջլեռնային գոգավորություններից են Խնուսի, Մշո և Խարբերդի դաշտերը:
- 4) Բասենի դաշտը տարածվում է Ճորոխ գետի վերին հոսանքի ավազանում:
- 5) Խարբերդի դաշտում միախառնվում են Արևմտյան Տիգրիս և Արևելյան Տիգրիս գետերը:
- 6) Արևելյան Եփրատի հովտում ամենաբարձրադիրը Ալաշկերտի դաշտն է:

70

ՀՀ Կոտայքի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Անտառները տարածվում են մարզի արևելյան շրջաններում:
- 2) Արևմտյան սահմանն անցնում է Գեղամա հրաբխային լեռնավահանի ջրբաժան գծով:
- 3) Կենտրոնական շրջաններում տիրապետողը կիսաանապատային լանդշաֆտներն են:
- 4) ՀՀ միակ մարզն է, որը չունի արտաքին սահմաններ:
- 5) Այս մարզում են Հատիս և Արայի լեռների հրաբխային կոները:
- 6) Շատ հարուստ է հանքային աղբյուրներով: